

Ս. կարապետին նուիրուած է թէ բարոյապէս իբր այն մենաստանին վերաբերեալ գործ մը, եւ թէ նիւթապէս, վաճառման արդիւնքը իբր հնչուն նուէր մը:

Մասնաւորապէս ուշադրութիւն կը գրաւէ Կոլոտի գրասիրութեան մէջ իր անսահման երախտագիտութիւնը, զոր ամէն տեղ եւ առատօրէն կ'արտայայտէ իր ուսուցչին, իր հոգեւոր հօր, Վարդան Վարդապետին: Իր տիտղոսներուն ամէնէն սիրելին ու ամէնէն արտայայտիչն է «աշակերտ» Վարդանայ Տիեզերալոյս եւայլն, եւայլն վարդապետին: Իր ժամանակին հրատարակուած գրքերուն շատերը նոյն կերպով «աշակերտ» Վարդանայ Բաղիշեցւոյ եւայլն տիտղոսը անհրաժեշտօրէն կը գործածեն: Այնքան անկեղծ է Կոլոտի վերաբերումը, որ ընթերցողն ալ կը զգածուի իրեն հետ եւ կը համակրի թէ Վարդանին եւ թէ Կոլոտին, տիրած են իրարու սրտին: Կոլոտ ամէն անգամ որ գրիչ ձեռք կ'առնու անպատճառ կը յիշէ իր վարդապետը:<sup>1</sup>

Կը հաւատամ որ Վարդանի կրթութիւնը մեծ դեր կատարեց Կոլոտի եւ Շղթայակրի բազմադիմի գործունէութեան մէջ: Կոլոտի գրական գործունէութիւնը հարազատ ցոլացումն է «Տաճարաշէն» Վարդանին, «որ աշակերտական գրովք եւ ճոխ զարմանալի վարդապետական պէս պէս մատենիք» զարդարեց ու պսակեց Ամրտօլու «համալսարան»ը:

Նոյնը եւ աւելին ստուգեցինք մենք Կոլոտի

1 Տեսանք արդէն թէ իր եւ Շղթայակրին կողմէն Ամրտոլցիներուն ուղղուած կոնդակին մէջ ալ «աշակերտ» տիտղոսը գործածած էին (տես էջ 167): «Լուսաւորութիւն խոստովանութեան» հատօրի Յիշատակարանին մէջ ճոխ եւ շատ զգայուն դրուագով մը կը յիշատակէ Վարդան վարդապետը եւ Շղթայակիրը: